

Այդ նկարագրություններուն մէջ ճարտասանական ամեն ձեւեր գործածուած են. աւանակ մը միայն կը պակսի հոն՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Երուսաղէմ մտնելը մեզի յիշեցնելու համար:

Չափազանցութիւններէ սիրտս կը խառնուի. այս մասին շատ փափուկ ստամոքս մ'ունիմ:

Հայր Օրմանեանն ես ալ կը սիրեմ ու կը յարգեմ, վասն զի նորին գերապատուութիւնն վեց ատենաբանութիւն ըրաւ ազգին հոգւոյն եւ մարմնոյն վրայ. եւ այսուհետեւ ալ կարող է երկու հարիւր յիսուն ատենախօսութիւն ընել ազգին մարմնակազմութեան վրայ. ուստի միշտ քաջալերութեան արժանի է, մանաւանդ երբ առաջնորդութիւնն կը ստանձնէ այնպիսի քաղաքի մը, ուր ընդարձակ ասպարէզ մը կը բացուի իւր առջեւ գործելու համար: Մակայն երբ կը տեսնեմ, որ գաւառացի չափազանցութեան կը դիմէ՝ իմ նուիրական պարտքս է չափաւորութեան հրաւիրել զայն:

Նա, որ ինքզինքը մարդկութեան համար գոհեց, Օրմանեանն շատ մեծ է անշուշտ. արդ երբ նա աւանակի վրայ նստած կը մտնէ Երուսաղէմ, իւր աշակերտը ի՞նչպէս մտնելու էր Կարին: Բայց որովհետեւ մեր եկեղեցականներն չունին իրենց վարդապետին խոնարհութիւնն՝ գոնէ պարգոյթեան մէջ մնալու ուխտ ընելու են:

Բայց Օրմանեան ի՞նչ յանցանք ունի, երբ իւր ժողովուրդն չափէն աւելի կ'յարգէ զայն: Նորին գերապատուութիւնը զրուցելու է, թէ ինք այնչափ յարգանաց արժանի չէ:

Նորին գերապատուութիւնը թող ներէ մեզ այս տողերը գրելնուս համար, որովհետեւ Կարնոյ թղթակիցին նամակը հոս հրատարակուած օրն՝ շատերն ըսին.

«Կ'երեւի որ կարնեցիները մարդ տեսած չունին մինչեւ հիմա»:

Ես չեմ ուզեր, որ կարնեցիները այսպէս զրպարտուին...:

19 Յունիս

Միացեալ Ընկերութիւնք անուն ընկերութիւնը 'ի զուր աշխատեցաւ չորս ամիս՝ իրեն յարմար անուն մը գտնելու համար. վասն զի հիմակուան անունն բնաւ չհամապատասխաներ իւր բռնած ընթացքին: Եթէ իմ կարծիքս հարցուէր՝ ես կ'առաջարկէի որ *Ոչ - Միանալիք ընկերութիւնք* անունով կնքուէր այդ ընկերութիւնը: